## ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

**Ե՞րբ պատվաստել իմ երեխային:**

**Երեխային 11 տարեկանից պատվաստելիս պատվաստանյութն առավել արդյունավետ է:**

Եթե իմ երեխան.

- 11–14 տարեկան է, անհրաժեշտ է պատվաստանյութի 2 դեղաչափ,
- 15-26 տարեկան է (բաց թողնված), անհրաժեշտ է 2 դեղաչափ.

**Կարևոր է իմանալ: Օգտվեք պատվաստման այցից՝ 11–13 տարեկանում նախատեսված ԱԿԴՓ (dTcaP)* կրկնապատվաստումը կամ 11–14 տարեկանում նախատեսված մենինգոկոկային վարակների դեմ պատվաստումը կատարելու համար, և նույն այցի ընթացքում ստացեք նաև ՄՊՎ-ի (ՀՊՎ) դեմ պատվաստանյութի դեղաչափերից մեկը:**

* դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի, պոլիոմիելիտի դեմ պատվաստուկ:

**Ինչպե՞ս պատվաստել իմ երեխային:**

Թե՛ աղջիկներին, թե՛ տղաներին պատվաստելու համար ես դիմում եմ.

- բժշկի
- դեղագործի
- մանկաբարձուհու
- բուժքրոջը (բուժեղբորը)
- համայնքային կամ դեպարտամենտային պատվաստման կենտրոն (տեղեկացեք ձեր քաղաքապետարանից կամ դեպարտամենտի խորհրդից):

**Ինչպիսի՞ կողմնակի ազդեցություններ կարող են լինել:**

Կլինիկական հետազոտությունների ընթացքում առավել հաճախ արձանագրված կողմնակի ազդեցությունները նույնն են, ինչ մյուս պատվաստանյութերի դեպքում՝ ներարկման հատվածում տեղային ռեակցիաներ (կարմրություն, ցավ և/կամ բորբոքում), գլխացավ, գլխապտույտ կամ ջերմություն, իսկ ավելի հազվադեպ՝ ալերգիկ ռեակցիաներ կամ ինքնազգացողության վատացում՝ գիտակցության հնարավոր կորստով:

Այս կողմնակի ազդեցությունները սովորաբար լինում են թեթև կամ միջին ծանրության և կարճատև:

**Որքա՞ն արժե ՄՊՎ (ՀՊՎ)-ի դեմ պատվաստումը:**

- Պատվաստանյութի յուրաքանչյուր դեղաչափի արժեքի 65 %-ը փոխհատուցում է ձեր բժշկական ապահովագրության դրամարկղը: Մնացած գումարը կարող է փոխհատուցվել լրացուցիչ բժշկական ապահովագրության (Mutuelle) կողմից:
- Որոշ քաղաքային կամ դեպարտամենտային պատվաստման կենտրոններում պատվաստումը կարող է լինել անվճար:
- Համերաշխության լրացուցիչ բժշկական ապահովագրության (CSS) կամ պետական բժշկական օգնության (AME) ապահովագրության շահառուների համար պատվաստումն անվճար է:

# ԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ՝ ԻՄ ԵՐԵԽԱՅԻՆ ՄՊՎ (HPV) ՔԱՂՑԿԵՂՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

**ՁԵՐ ԵՐԵԽԱՆ ՍՈՎՈՐՈՒՄ Է ՔՈՒԵՋԻ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ, ՁԵՐ ՀԱՄՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ**

- նա կարող է պատվաստվել քոլեջում՝ բուժաշխատողի կողմից;
- նա կստանա պատվաստանյութի 2 դեղաչափ՝ 5-13 ամիս ընդմիջումով
- դուք որևէ վճարում չեք կատարի:

ՀՊՎ-ի դեմ պատվաստումը կարող է կատարվել միաժամանակ մենինգոկոկային վարակների դեմ պատվաստման հետ, որը նույնպես անվճար իրականացվում է քոլեջում:

**Մինչ օրս, ավելի քան 100 միլիոն երեխաներ և դեռահասներ պատվաստվել են աշխարհի շուրջ 80 երկրներում:**

**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր բժշկին կամ այլ առողջապահության մասնագետին կամ այցելեք vaccination-hpv.cancer.fr կայքը:**

AUSTRALIE – Ձևաթղթի փոփոխում – INCa – SIREN : 187 512 777 – 2025 թ. դեկտեմբեր – DEPVACCHPVEN2512.

RÉPUBLIQUE FRANÇAISE
*Liberté*
*Égalité*
*Fraternité*

INCa
Institut National du Cancer

# ՊԱՏՎԱՍՏՈՒՄ ՄՊՎ (ՀՊՎ) ՔԱՂՑԿԵՂՆԵՐԻ ԴԵՄ*

## ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ ՈՒ ՏՂԱՆԵՐԻՆ՝ ՍԿՍԱԾ 11 ՏԱՐԵԿԱՆԻՑ:

ՊՐԱԿՏԻԿ ՈՒՂԵՑՈՒՅՑ

*HPV : Human Papillomavirus կամ Մարդու պապիլոմավիրուս

# ԵՍ ՏԵՂԵԿԱՆՈՒՄ ԵՄ ՄՊՎ ՔԱՂՑԿԵՂՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

**Ինչու՞ պատվաստել իմ երեխային:**

Այսօր ՄՊՎ-ի դեմ պատվաստումը կանխում է քաղցկեղների առաջացման պատճառ հանդիսացող ՀՊՎ վարակների մինչև 90 %-ը:

Այն խորհուրդ է տրվում աղջիկներին և տղաներին՝ կանխելու համար՝

- արգանդի վզիկի, բունոցի, հեշտոցի և հետանցքի նախաքաղցկեղային ախտահարումները և/կամ քաղցկեղները,
- բարորակ, սակայն ցավոտ ախտահարումները, որոնք առաջանում են հետանցքի և սեռական օրգանների մաշկի կամ լորձաթաղանթների վրա (անոգենիտալ գորտնուկներ):

## ԱՊԱՀՈՎ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

**Ավելի քան 15 տարի է, ինչ ողջ աշխարհում կիրառվել է ավելի քան 300 միլիոն դեղաչափ:**

**Իրականացվում է խիստ միջազգային հսկողություն:.**

**ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութերի լայն կիրառումը, բազմաթիվ երկրներում և միջազգային մակարդակով մշտական հսկողությունը, ինչպես նաև հատուկ հետազոտությունների արդյունքները հաստատել են դրանց անվտանգության գերազանց մակարդակը, որը ճանաչված է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից:**

Այսպիսով, օրինակ, ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութերի և աուտոիմուն հիվանդությունների միջև որևէ կապ չի ապացուցվել:

ՄՊՎ-ի դեմ պատվաստման արդյունավետությունը հաստատվել է այն երկրներում, որտեղ պատվաստված երիտասարդների թիվը բարձր է, օրինակ՝ Ավստրալիայում, որտեղ արձանագրվել է արգանդի վզիկի քաղցկեղի, նախաքաղցկեղային ախտահարումների և անոգենիտալ գորտնուկների դեպքերի զգալի նվազում ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց շրջանում:

# ԵՍ ՏԵՂԵԿԱՆՈՒՄ ԵՄ ՄԱՐԴՈՒ ՊԱՊԻԼՈՄԱՎԻՐՈՒՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Ի՞նչ են ՄՊՎ-ները (HPV):**

**Կանանց և տղամարդկանց շուրջ** 80 %-ը կյանքի ընթացքում ենթարկվում է այս վիրուսների ազդեցությանը: ՄՊՎ-ով վարակները սովորաբար անհետանում են մի քանի ամսվա ընթացքում, սակայն դեպքերի փոքր մասում դրանք կարող են պահպանվել և վերածվել հիվանդության:

**Ի՞նչ կապ կա ՄՊՎ-ների և քաղցկեղների միջև:**

Գոյություն ունի ՄՊՎ-ի մոտ 200 տեսակ, որոնցից որոշները կարող են առաջացնել նախաքաղցկեղային ախտահարումներ և քաղցկեղ: ՄՊՎ-ները առաջացնում են նաև անոգենիտալ գորտնուկներ:

**Ինչպե՞ս են փոխանցվում ՄՊՎ-ները:**

Այս վիրուսները փոխանցվում են սեռական օրգանների անմիջական շփման միջոցով՝ առավել հաճախ սեռական հարաբերությունների ընթացքում՝ ներթափանցմամբ կամ առանց դրա:

**ԱՄԵՆ ՏԱՐԻ ՖՐԱՆՍԻԱՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՊԱՊԻԼՈՄԱՎԻՐՈՒՍՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԳՐԱՆՑՎՈՒՄ Է ՔԱՂՑԿԵՂԻ 7 130 ՆՈՐ ԴԵՊՔ**

Թեև ՄՊՎ-ի հետ կապված քաղցկեղները հիմնականում հանդիպում են կանանց մոտ, դրանց գրեթե 30 %-ը ախտահարում է տղամարդկանց:

Ֆրանսիայում կանանց և տղամարդկանց շրջանում ՄՊՎ-ով պայմանավորված հիվանդությունների թիվը (քաղցկեղների վերաբերյալ՝ ըստ Ֆրանսիայի քաղցկեղի ռեգիստրների (2018 թ.), իսկ նախաքաղցկեղային ախտահարումների և անոգենիտալ գորտնուկների վերաբերյալ՝ ըստ Շիելդ և համահեղինակների, Հարտիգ և համահեղինակների (2015 թ.):

| | ՏՂԱՄԱՐԴԻԿ | ԿԱՆԱՅՔ |
|---|---|---|
| Առնանդամի քաղցկեղ/ Բունոցի և հեշտոցի քաղցկեղ | 120 | 250 |
| Հետանցքի քաղցկեղ | 450 | 1 400 |
| Բերանըմպանային հատվածի, կոկորդի և բերանի խոռոչի քաղցկեղ | 1 530 | 480 |
| Արգանդի վզիկի քաղցկեղ | — | 2 900 |
| Բունոցի, հեշտոցի և հետանցքի նախաքաղցկեղային ախտահարումներ | 130 | մոտ 2 500 à 3 000 |
| Արգանդի վզիկի նախաքաղցկեղային ախտահարումներ (CIN 2+) | — | մոտ 30 000 |
| Անոգենիտալ գորտնուկներ | մոտ 50 000 | մոտ 50 000 |